

*Աղա Միքայէլի կտակի երկրորդ էջ (նկարը հեղինակինն է)*

# ՄԻԼԼԻ ԿԱՄ ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ Կ.ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԵՒ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1919-1920 թթ.)

Մարիամ Յովսէփեան

*Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտութիւնը մասնատման վտանգի առջեւ էր կանգնեցրել նախկին հզօր Օսմանեան կայսրութեան ժառանգորդ այդ երկրին: Դրա դէմն առնելու համար թուրք ազգայնական գործիչներն սկսեցին ոչ միայն միջոցներ փնտրել տեսական հողի վրայ, այլեւ ձեռնարկեցին մտածուած քաղաքական պայքար թէ՛ իշխող վերնախաւի, թէ՛ Համաձայնական ուժերի վարած քաղաքականութեան ու մշակած ծրագրերի դէմ: Դիւանագիտական անուրանալի կարողութիւնների, բանակցութիւններ վարելու եւ իրենց տեսակէտներն առաջ տանելու հմտութիւնների, ինչպէս նաեւ աշխարհա-քաղաքական հանգամանքներն յօգուտ իրենց ծառայեցնելու շնորհիւ կարճ ժամանակում նրանք յաջողեցին իրենց մտադրութիւններում եւ պահպանեցին Թուրքական պետութիւնը:*

*Որպէս Միլլի կամ Քեմալական շարժման սկզբնաւորման օր Թուրքական պաշտօնական պատմագրութիւնը համարում է 1919 թուականի մայիսի 19-ը, որը Թուրքիայի ազգային տօների շարքում է: Այդ օրը Մուստաֆա Քեմալն իր գաղափարակիցների հետ ծովային ուղիով մտնում է Սամսուն: Մասնագէտները «Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն» բուհական դասագրքում այդ շարժման մասին գրել են հետեւեալը. «Քեմալական շարժումը երիտթուրքերի նախապատրաստած ազգայնամոլական շարժում էր, որի նպատակն էր պահպանել Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութիւնը եւ թուրքերի իշխանութիւնը հպատակ ժողովուրդների նկատմամբ»[1]:*

*1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքուած Մուդրոսի զինադադարից յետոյ Անտանտի երկրները 1916 թ. մայիսի 16-ին ստորագրուած Սայքս-Պիկոյի համաձայնագրի հիման վրայ սկսում են Օսմանեան կայսրութեան տարածքի բաժանման գործընթաց: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտութիւնը հայերին, յոյներին եւ արաբներին հնարաւորութիւն էր տալիս դուրս գալ թուրքական լծի տակից ու իրենց պատմական տարածքների վրայ հիմնել անկախ պետութիւններ: Եւրոպական յաղթանակած պետութիւնների հովանու ներքոյ այս ժողովուրդների ծաւալած ազատագրական պայքարին դէմ էր Մուստաֆա Քեմալի անունով կոչուած Քեմալական շարժումը[2]:*

*Ե. Սարգսեանը փաստում է, որ նպատակին հասնելու համար «Քեմալական շարժումը չխորշեց նաեւ ցեղասպանութիւնից՝ Արեւելեան Հայաստանում եւ Կիլիկիայում կոտորելով հայերին, Փոքր Ասիայի արեւմուտքում՝ յոյներին եւ հայերին, Արեւմտեան Հայաստանում՝ քրդերին»[3]:*

1 *Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն*, Եր., 2018, «ՎՄՎ-Պրինտ», էջ 24:

2 Տե՛ս http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_qemalakan_sharjum

3 Նոյն տեղում:

© National Library of Armenia

Միլլի շարժումը Թուրքիայում միանշանակ չի ընդունուել իր ձեւաւորման սկզբնական փուլում: Իշխանական վերնախաւը հարկ չէր համարում լուրջ պայքար սկսել քեմալականների դէմ, սակայն, երբ նրանք արագօրէն վերածւում են արդէն քաղաքական գործօնի, որն արգելափակում էր գաւառները մայրաքաղաքին կապող ճանապարհները, կարողանում էր շուրջը համախմբել հազարաւոր մոլեռանդ թալանչիների ու հայատեաց մարդասպանների եւ որը պետութիւն էր ստեղծել պետութեան մէջ, հաշտութեան եզրեր են փնտրում Քեմալի հետ՝ զիջելով երկրի կառավարման ղեկը մի մարդու, որն ունակ էր աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում երկրի համար ընդունել տալ բախտորոշ որոշումներ՝ համադրելով անձնական շահը պետականի հետ: Մինչեւ իշխանութիւնը վերցնելը՝ Մուստաֆա Քեմալին իշխանութիւնները նոյնիսկ մահուան էին դատապարտել՝ նրան համարելով պետական դաւաճան, որի գործունէութեան հետեւանքով խաթարուել էր երկրի բնականոն կեանքը եւ տեղական կառավարման մարմինները չէին կարողացել ի կատար ածել կենտրոնից տրուող տարատեսակ հրամանները[4]: Նա կարողանում է ճարպկօրէն խուսափել մահապատժից՝ զինուած պայքարով ու դիւանագիտական աշխատանքով իր համար ուղի հարթելով նախ՝ օսմանեան խորհրդարանում որպէս երեսփոխան, ապա՝ կառավարութիւնում դառնալով առաջին դէմք: Քեմալի հեղինակութիւնն աճում է մասնաւորապէս այն ժամանակ, երբ նրա գլխաւորած Միլլի շարժումը, հանդէս գալով թուրք ժողովրդի անունից, յայտարարում է, թէ չէր ճանաչում Հայկական հարցի վերաբերեալ Փարիզի համաժողովի փաստաթուղթն օրինական, թէեւ այն ստորագրել էր Թուրքիայի սուլթանական կառավարութիւնը[5]: Հէնց այդ քայլով քեմալականները մուտք են գործում Թուրքիայի կառավարման համակարգ՝ իրենց քաղաքական ծրագրերն ու կամքը պարտադրելով օրուայ իշխանութիւններին: Ակադեմիկոս Ռուբէն Սաֆրաստեանը յիշատակում է Քեմալի կողմից 1919 թուականի յունիսին Ամասիայում անցկացրած մի քանի բանակային հրամանատարների գաղտնի ժողովում ընդունուած շրջաբերականը, որն ուղղուած էր զինուորական ու քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչներին[6]: Այնտեղ նշուած էր հետեւեալը. «Սուլթանի կառավարութիւնը չի կարողանում պատշաճ կերպով պաշտպանել կայսրութեան տարածքային ամբողջականութիւնը, եւ այդ պատճառով անհրաժեշտ է, որ «ազգն իր ձեռքը վերցնի անկախութեան եւ տարածքի պաշտպանութիւնը»[7]: Անուանի պատմաբան Գալուստ Գալոյեանը Քեմալի վարած քաղաքական պայքարում կարեւորում էր 1919 թուականի սեպտեմբերի 4-11-ը Սվազում (Սեբաստիայում) տեղի ունեցած համաթուրքական առաջին ազգային վեհաժողովն, այնտեղ ընդունուած հռչակագիրը եւ այն որոշումը, որով «արգելւում էր Ստամբուլի կառավարութեանը հաշտութիւն կնքելու դաշնակիցների հետ՝ առանց վեհաժողովի կողմից ընտրուած գործադիր կոմիտէի համաձայնութեան»[8]:

Ժողովրդական կամ Միլլի շարժման առաջնորդներն, արեւմտահայ գաւառում Թուրքական իշխանութիւնների հրահանգով իրականացուած Հայոց ցեղասպանութեան իրական շարժառիթներն ու իրողութիւնները խեղաթիւրելով, նենգափոխելով եւ սուտը ճշմարտութեան տեղ մատուցելով, Հայկական հարցը Փարիզի համաժողովում եւ միջազգային այլ ատեաններում

4 *Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն*, էջ 25:

5 Նոյն տեղում, էջ 24:

6 Նոյն տեղում:

7 Նոյն տեղում:

8 Գալոյեան Գալուստ, *Հայաստանը եւ մեծ տէրութիւնները 1917-1923 թթ.*, Եր, 1999, «Գիտութիւն», էջ 130:



փոխարինում են Թուրքական հարցով՝ միաժամանակ հիմնականում հայկական պատմական հայրենիքի բռնագաւթուած ու հայերից բռնաթափուած հողերի հաշուին ստեղծում են Թուրքիայի Հանրապետութիւնը: Այս գործում առանձնայատուկ էր շարժման առաջնորդի դերակատարութիւնը: Մուստաֆա Քեմալը, որը, թուրքահպատակ ժողովուրդների իրաւունքներն ոտնահարելով, ֆիզիկապէս ոչնչացնելով ու մասնաւորապէս հայերին բռնի տարհանելով իրենց պատմական հայրենիքից, ի զօրու եղաւ համախմբել գրեթէ ոչնչացման եզրին գտնուող թուրքական բանակի հրամանատարական կազմին, Թուրքիայի վերնախաւին, Թուրքիայում բնակուող իսլամադաւան ժողովուրդներին, ի թիւս որոնց՝ քրդական ցեղախմբերին, շահագրգռեց եւրոպական հզօր պետութիւնների ներկայացուցիչներին եւ կործանումից փրկեց Թուրքական պետութիւնը:

Պէտք է նշել, սակայն, որ դարեր շարունակ զրկուած լինելով պետականութիւնից եւ հիմնականում շեշտուած անհատական կամ խմբակային պայքար ծաւալելով յանուն անկախութեան կամ ինքնավարութեան, անգամ պատմական բարենպաստ իրադարձութիւններից ու իրավիճակներից հայ ժողովուրդն այդպէս էլ չկարողացաւ հասնել իր ազատագրական պայքարի բուն նպատակին: Բաւական է յիշատակել այս առումով Փարիզի վեհաժողովն ու Հայկական հարցի համար կամ դրա դէմ տարուող հայկական ու թուրքական պատուիրակութիւնների դիւանագիտական աշխատանքը եւ արձանագրած արդիւնքները՝ չմոռանալով այն հանգամանքը, որ կար իրար հետ մրցակցող հայկական երկու պատուիրակութիւն:

1919-1920 թուականներին պոլսահայերի շրջանում բաւական բարձր վարկանիշ ունեցած «Ճակատամարտ» եւ «Ժամանակ» օրաթերթերի էջերում բազմաթիւ յօդուածներ են զետեղուած, այդ թւում՝ թուրքական մամուլից թարգմանաբար տպագրուած, որոնցում դրանց խմբագրակազմերն ընթերցողներին ներկայացրել են Միլլի շարժման առաջացման պատճառներն ու էութիւնը, Մուստաֆա Քեմալի ղեկավարած գործողութիւններն ու Թուրքիայի պետականութեան պահպանման համար ձեռնարկած քայլերը: Մինչեւ 1919 թուականի հոկտեմբեր ամսուայ առաջին տասնօրեակը յիշեալ պարբերականներում, ինչպէս նաեւ Կ.Պոլսում հրատարակուած հայկական ու թուրքական թերթերում, Միլլիին անդրադարձել են հիմնականում երրորդ կամ չորրորդ էջերի մանր լուրերի բաժիններում՝ կարեւորութիւն չտալով Քեմալի հրամանատարութեան ներքոյ հաւաքուած ազգայնականների ձեռնարկներին: Հոկտեմբերի մեկին, օրինակ, «Ճակատամարտը» «Թուրք թերթեր» խորագրի ներքոյ թարգմանաբար ներկայացրում էր «Թարիզ» թերթից լուր այն մասին, որ Անատոլիայում գտնուող օտարերկրեայ դիւանագիտական ներկայացուցիչներն իրենց կառավարութիւններին ուղարկած տեղեկագրերում նշում էին, որ, հակառակ այդ շրջանում առկայ անհամաձայնութիւններին, «գոյութիւն ունեցող խմբաւորումները ազգային եւ սոսկ ներքին հանգամանք մը ունին, ուստի եւ անհրաժեշտութիւն ցոյց կը տրուի՝ խուսափելու համար անտեղի ու անժամանակ խստութիւններ գործադրելէ»[9]: Հոկտեմբերի եօթին «Իֆհամ» պարբերականն առաջարկում էր խելամտօրէն կառավարել Անատոլիայում սկսուած ազգայնական շարժումը, թէ՝ չէ,

9 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիւ 271 («Միլլի շարժումը գէշ նպատակ չունի եղեր»):

© National Library of Armenia

այն «Հայրենիքին համար վտանգաւոր արդիւնքներ կ'ունենայ»[10]: «Երկիրը, որ այսքան դժուարին ժամանակի մը մէջ ստուգիւ փափուկ կացութեան մը մատնուած է, չկրնար մխիթարուիլ մինչեւ որ իր գլուխը չունենայ ամենէն կարող պետական անձերը»[11],- գրում էր այդ թերթը: «Ճակատամարտի»՝ նոյն օրուայ համարի երրորդ էջում ամփոփուած վերլուծութիւններն ու լուրերը կարծես անուղղակի կերպով մատնանշում էին Թուրքիայի ապագան կերտող այդ պետական պաշտօնեաներին եւ նրանց առաջնորդ Մուստաֆա Քեմալին: Դրանցից մեկում հատուած կայ Միլլի շարժման զինուորական ընդհանուր հրամանատարի կողմից Իզմիրի քննիչ մարմնին ուղարկուած յիշատակագրից[12]: Այնտեղ արտայայտուած էր միլլիների զայրոյթը Թուրքիայի կառավարութեան դէմ, որոնց անկարողութեան հետեւանքով յունական զօրքը գրաւել էր Իզմիրը: Ասւում էր, որ թէեւ իշխանական ուժերն իրենց դեռ չէին ընդունում որպէս Թուրք ժողովրդի կամքի արտայայտիչների, բայց իրենք շարունակելու էին զինուած պայքարը՝ յանուն երկրի ամբողջականութեան վերականգնման. «Այսօր պզտիկ բանակ մը ունինք, որուն նուիրական նպատակն է պատերազմը շարունակել, մինչեւ որ մեր հայրենի հողին վրայ մեկ հելլէն չմնայ եւ մինչեւ որ մեր դժբախտ հայրենակիցները իրենց տեղերը չի տեղաւորուին»[13]: Լուրերից մեկի վերնագիրն էր՝ շատ խօսուն՝ «Դահլիճը կը բանակցի Միլլի ուժերու հետ. Մուստաֆա Քեմալ կը սպառնայ»[14]: Նա Ֆերիտ փաշային զգուշացնում էր՝ իրենց դէմ զօրք չհանել, քանի որ հետեւանքների համար կառավարութիւնն էր պատասխան տալու[15]: Պահանջում էր նաեւ Բարձրագոյն ատեանի քննութեանը յանձնել Ֆերիտ փաշայի ու նրա գործընկերների որոշումներն ու ձեռնարկները, որոնց պատճառով յոյները գրաւել էին Իզմիրը, իսկ երկիրն էլ դիւանագիտական անյաջողութիւններ էր կրել[16]: Ըստ «Ճակատամարտի» հրապարակումների՝ Փարիզի համաժողովին մասնակցող թուրքական պատուիրակութեան անդամ Րիզա Թեւֆիկ բէյը յայտարարել էր, թէ Ֆերիտ փաշան Փարիզում ինքնագլուխ էր գործել եւ առանց միւս պատուիրակներին տեղեակ պահելու էր խմբագրել Հաշտութեան համաժողովին տրուած յիշատակագիրը. «Ասկէ զատ՝ մեծ տարբերութիւն կայ եղեր այդ յիշատակագրին եւ հոս հրատարակուող պատճենին միջեւ»[17]: Այս ձեւով Միլլի շարժման ներկայացուցիչներն ու համակիրները հող էին նախապատրաստում Փարիզի Խաղաղութեան համաժողովին առաջիկայում ուղարկուելիք նոր առաջարկների ու փաստաթղթի համար, որտեղ Հայկական հարցին տալու էին թուրքանպաստ լուծում եւ ոտնահարելու էին հայութեան շահերն ու իրաւունքները: Պատահական չէր, որ նրանք Ֆերիտ փաշային մեղադրում էին այն յայտարարութեան համար, որով խոստանում էր Արեւմտեան Հայաստանին «տալ լայն ինքնավարութիւն մը, ինչ-որ այդ հողամասն ուրիշներուն ձգուելու տպաւորութիւնը յառաջ բերաւ»[18]: Այդ համաժողովում Հայկական հարցի թուրքավնաս արծարծումի դէմն առնելու նպատակով էին

10 Նոյն տեղում, 1919, թիւ 276 («Աւելի զօրաւոր դահլիճ կ'ուզեն»):

11 Նոյն տեղում:

12 Նոյն տեղում, 1919, թիւ 276 («Միլլի ուժերը եւ Իզմիրի քննիչ մարմինը»):

13 Նոյն տեղում:

14 Նոյն տեղում («Դահլիճը կը բանակցի Միլլի ուժերու հետ. Մուստաֆա Քեմալ կը սպառնայ»):

15 Նոյն տեղում:

16 Նոյն տեղում:

17 Նոյն տեղում, 1919, թիւ 275 («Ի՞նչ կ'ըսէ Րիզա Թեւֆիք բէյը»):

18 Նոյն տեղում, 1919, թիւ 276 («Միլլի շարժման նպատակը եւ հայերը»):



քեմալականները բացատրում կամ հիմնաւորում Միլլի շարժման ծագումը: Թուրքական «Թասուիր» թերթը այս կապակցութեամբ մէջբերում էր քեմալականների՝ Էրզրումի համաժողովում ընդունուած յայտարարութիւնից հետեւեալ հատուածը. «Արեւելեան Անատոլուի մէջ իսլամները հայերուն յարձակումներէն պահպանելու անհրաժեշտութենէն ծագում առաւ Միլլի շարժումը»[19]: «Վագըթ» թերթն իր հերթին Միլլիի առաջացումը նոյնպէս կապում էր յունական բանակի առաջխաղացման եւ Հայկական հարցի հետ: «Անատոլուի շարժումը ծնաւ Այտընի հելլէնական գրաւումին վրայ: Ֆերիտ փաշայի կառավարութեան բացած այս եղերական շրջանը՝ զարթումի արշալոյս մը եղաւ Արեւելեան Անատոլուի համար: Թրքական նահանգներու մէջտեղը Հայաստանի մը կազմութեան նպատակը եւ այդ մասին յանկարծական գործադրութեան մը հաւանականութիւնը տեղացի հայրենակիցները խմբեց վտանգին առջեւ: Մինչ ասկէց օգտուողը կառավարութիւնը պիտի ըլլար, ընդհակառակը, ան իսկապէս կասկածելի յամառութեամբ մը Անատոլուի այս զարթումը իթթիհատական դաւ մը կը նկատէր եւ անոր գլխաւորները իբր դաւաճան կը հռչակէր»[20],- կարդում ենք թերթում: Աւելացնում էր նաեւ, որ, հակառակ կառավարութեան գործադրած ջանքերին, Միլլի շարժումը գնալով հզօրանում էր՝ Էրզրումում երդուելով Մուդրոսի «զինադադարի կնքման պահուն գոյութիւն ունեցող սահմանին մէջ հաշտութիւն մը կնքելու համար»[21]: Սեբաստիայի համաժողովի վարչութեան պատրաստած զեկոյցում, որը տպագրուել էր «Իրատէի միլլիէ» թերթում, Թուրքիայի արտաքին ու ներքին հանգամանքներով էին պայմանաւորում Միլլի շարժման առաջացումը. «Մեր հայրենիքը արտաքնապէս բաժանուելու վտանգին ենթարկուած է, ներքնապէս ալ կեդրոնի կառավարութեան ղեկավարները, դաւաճանելով մեր շահերուն, մեր թշնամիներուն հետ հանդիսատեսի դերին մէջ կը մնան: Այս պատճառով ազգին կը մնար իր գլխուն ճարը նայիլ: Ահա այս նուիրական պահանջէն էր, որ ծագում առաւ Միլլի շարժումը»[22]: Նոյն թերթի խմբագրականներից մեկում էլ, ոչ միայն արդարացնում էին Միլլի շարժման հայահալած գործողութիւնները, այլեւ համարում էին, որ «հայ ջարդելը ինքնապաշտպանութիւն է եղեր»[23]: Ըստ յօդուածագրի՝ Ֆերիտ փաշայի կառավարութիւնը, փոխանակ միջոցներ գտնէր, խուսափելու համար 1916 թուականի Լոնդոնի դաշնագրի համաձայն՝ Թուրքիայի արեւելեան նահանգներում (այն է՝ Արեւմտեան Հայաստանում) Հայաստան ստեղծելու պարտադրանքից, սկսել էր դատել հայերի տեղահանութեան պատասխանատուներին եւ սուլթանի նախագահութեամբ անցկացուած ժողովում յայտարարել էր, թէ «արեւելեան նահանգներու մէջ Հայաստանի մը կազմութեան պատրաստ է կառավարութիւնը»[24]: Թերթը գրում էր, որ թուրքերի իրաւունքները եւ Թուրքիայի մասնատումը թոյլ չտալու նպատակով էր հէնց այդ տարածքներում ծաւալուել Միլլի շարժումը[25]:

«Ճակատամարտի» թղթակցութիւններից պարզ էր դառնում, որ Միլլի շարժման թափ հաւաքելուն զուգընթաց՝ նրա հետ սկսել էին հաշուի նստել, ու քեմալականների պահանջով թէ՛ արագացուել էր խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը, թէ՛ թոյլ էր տրուել քեմալական-

19 Նոյն տեղում («Միլլի շարժումները»):

20 Նոյն տեղում, 1919, թիւ 275 («Միլլի շարժումին նպատակը եւ Հայաստանը»):

21 Նոյն տեղում:

22 Նոյն տեղում («Սեբաստիոյ քոնկրէսին զեկոյցը»):

23 Նոյն տեղում, 1919, թիւ 278 («Հայ ջարդելը ինքնապաշտպանութիւն է եղեր»):

24 Նոյն տեղում:

25 Նոյն տեղում:

© National Library of Armenia

ների հսկողութեամբ դրանց կազմակերպումը եւ ընթացքի կառավարումը[26]: Նոյն օրերին «Ճակատամարտն» իր ընթերցողներին տեղեկացնում էր, որ Թուրքիայի նոր վարչախումբը Թեւֆիք փաշայի գլխաւորութեամբ համագործակցելու էր Միլլի շարժման հետ՝ ներման արժանացնելով ու նախկին զինուորական աստիճանները վերադարձնելով այդ շարժման առաջնորդներ Մուստաֆա Քեմալին եւ Րէուֆ բէյին, որը ոչ վաղ անցեալում եղել էր Թուրքիայի ծովային նախարարը[27]: Թերթն, այսպիսով, արձանագրում էր այն փաստը, որ թուրքական պետութեան կառավարման ուղղութիւնը որոշողների եւ թելադրողների խմբում յայտնուել էին նոր գործող անձինք, որոնք իրենց փոքրաթիւ զինուած ուժերի եւ մարտավարական ծրագրերի շնորհիւ երկրում փոփոխութիւններ էին պատրաստւում անել: «Ճակատամարտի» աշխատակիցներից Արտաշէս Վանարեանը 1919 թուականին հանդէս էր եկել երկու յօդուածաշարով՝ «Միլլի շարժման էութիւնը» եւ «Հակամիլլի շարժման արժէքը»: Դրանցում նա բաւական հանգամանօրէն եւ օբյեկտիւ վերլուծութեան էր ենթարկել թուրքական իրականութեան մէջ ոչ պատահականօրէն ու կոնկրետ պահանջուած ժամանակ ծնունդ առած այս շարժման առաջացման արտաքին ու ներքին պատճառները, շարժառիթները, նպատակները, համագործակցութեան շրջանակները: Ամփոփելով ուսումնասիրութեան արդիւնքները՝ յօդուածագիրը փաստում էր, որ «իթթիհատը ձեւափոխուելով «Միլլի Թէշքիլաթի»՝ աստիճանաբար նուաճեց ամբողջ նահանգները եւ այն աստիճան հեղինակութեան տիրացաւ, որ շատ մը վայրերը սոսկ հեռագրելով իրեն հպատակեցուց»[28]: Գրում էր, որ նահանգներում հաստատուելուց յետոյ նրանք իրենց հարցերը կարգաւորեցին Կ.Պոլսում՝ տապալելով Իթթիլաֆի կառավարութիւնը եւ այն փոխարինել տալով այնպիսի գործադիր իշխանութեամբ, որը, եթէ նոյնիսկ իրենց ամբողջովին չօժանդակեր, գոնէ մինչեւ նոր խորհրդարանական ընտրութիւններն ու խորհրդարանի ձեւաւորումը, չէր խանգարելու Միլլիի գործունէութեանը եւ իշխանազաւթման ծրագրերի իրականացմանը[29]: Ա. Վանարեանը քեմալականների յաջողութիւնը պայմանաւորում էր երկու գործօնով.

- այդ շարժման կազմակերպիչների եւ անդամների ներքին ուժով,
- աշխարհի զօրեղ պետութիւնների կողմից Միլլին Թուրքիայի ներքին ազգային խնդիր համարելու պատճառով՝ դրա ծաւալման եւ ընթացքի մէջ Համաձայնական ուժերին ուղղուած վտանգ չտեսնելու ու այն «չէթէյական շարժում» չբնորոշելու հանգամանքներով[30]:

Թէեւ իթթիհատական թերթերը 1919 թուականին պնդում էին, որ Միլլի շարժումն իրենց կուսակցութեան հետ կապ չունէր, բայց Արտաշէս Վանարեանը հակառակն էր ապացուցում իր յօդուածաշարերում[31]: Նա ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում էր այն փաստի վրայ, որ իթթիհատական կառոյցներն ամեն կերպ խոչընդոտել էին խորհրդարանական նոր ընտրութիւնների անցկացումը, մինչեւ որ արեւմտահայ գաւառի տարածքներում թափ չհաւաքեց Միլլի շարժումը[32]: Ի վերջոյ ընտրութիւնների կազմակերպումը տեղի է ունենում՝ համընկնելով Միլլի շարժման աստեղային պահի հետ. «Այդ այն ժամանակն էր,

26 Նոյն տեղում:

27 Նոյն տեղում, 1919, թիւ 274 («Ներում կը շնորհուի Միլլի շարժման պետերուն»):

28 Նոյն տեղում, 1919, 321 («Ո՞վ պիտի ըլլայ յաղթողը. Միլլի՞ն, թէ՞ հակառակորդները»):

29 Նոյն տեղում:

30 Նոյն տեղում:

31 Նոյն տեղում,1919, 279 («Ընտրական հարցին կարեւորութիւնը Իթթիհատին համար»):

32 Նոյն տեղում:



երբ Մուսթաֆա Քեմալ փաշան, իր հեղինակութիւնը տարածած Անատոլուի Արեւելեան շատ մը նահանգներուն վրայ, Միլլի շարժման Կարինի համաժողովը կը գումարէր...Ու վերջապէս հնչեց վստահութեան ժամը: Գաւառէն խլրտումի ձայներ հասան Պոլիս: Մուստաֆա Քեմալ փաշայ, դուրս գալով իբր Գ զօրաբանակի քննիչ իրեն տրուած իրաւասութեան սահմանէն, ինքնագլուխ կանոնագրեր կը պատրաստէր կառավարիչներու համար եւ շատ տեղերու մէջ բացարձակ տիքտատորի մը պէս կը պարտադրէր իր կամքը»[33]: Արտաշէս Վանարեանը, վերլուծելով Միլլի շարժման եւ Թուրքիայի նախորդ, մասնաւորապէս իթթիհատական իշխանութիւնների գործելակերպը, յանգում էր հետեւեալ եզրակացութեանը. չկար որեւէ սկզբունքային տարբերութիւն Միլլի եւ նախորդ կառավարութիւնների միջեւ[34]: Յօդուածագրի կարծիքով՝ Թուրքիայի ներքին կեանքում խորքում իթթիհատական կուսակցութեան գաղափարակիր Միլլի շարժման նպատակն էր «վերջ տալ ուրիշներու տիրապետութեան, դադրեցնել հալածանքը իթթիհատականներու դէմ, ազատել բանտարկուած ոճրագործները, պաշտօնի անցնիլ, դիրքի տիրանալ եւ նոր ընտրութիւններով ձեռք առնել կառավարական ղեկը»[35]: 1919 թուականի հոկտեմբեր ամսուայ դրութեամբ, ինչպէս գրում էր Վանարեանը, Միլլին կարճ ժամանակամիջոցում կարողացել էր հասնել իր առջեւ դրուած այդ նպատակների մեծ մասի իրականացմանը: Յօդուածագիրը նշում էր, որ քեմալականները նաեւ արտաքին քաղաքական դաշտում էին յաջողութիւններ գրանցել: Առաջին հերթին՝ Թուրքիան մասնատումից փրկելն էր նրանց նպատակը, ինչի համար կարողացել էին համախմբել «ամբողջ անատօլուցի թրքութիւնը»՝ կորով ներշնչելով այն մարդկանց, որոնք «հինգ տարուան տառապալից զինուորութենէ մը ջախջախուած ու պարտուած վերադառնալով՝ պարզապէս անզգայ դիակի մը կերպարանքը առած էին, շարժելու անկարող եւ որ եւ է գործի անընդունակ»[36]: Փարիզի համաժողովում Հայկական հարցի պահանջատիրութիւնից հրաժարուելու նպատակով քեմալականները պէտք է թոյլ չտային ցեղասպանութիւնից փրկուած արեւմտահայերի վերադարձն իրենց տներ (ի դէպ, նրանք արգելել էին նաեւ կոտորածներից փրկուած յոյների ներգաղթը՝ այդպիսով քրիստոնեայ ազգաբնակչութեանը դարձնելով ոչ թէ ազգային, այլ կրօնական փոքրամասնութիւն): Վանարեանն այս առիթով գրում էր. «Համաժողովին՝ «Արեւելեան նահանգներու մէջ հայ չկայ» ըսել կարենալու համար Միլլին ոչ միայն չգոհացաւ բազմաթիւ քիւրտ աշիրեթներ բերել-բնակեցնելով Հայոց կալուածներուն մէջ, ոչ միայն զանոնք զինեց ոտից ցգլուխ եւ պաշարեց ամբողջ սահմանագլուխը, այլեւ փորձեց Հայաստանի սահմաններէն ներս ալ դիւային խաղ մը խաղալ, ոտքի հանել թաթարները Հայաստանի կառավարութեան դէմ, որպէս զի ան հազիւ ժամանակ ունենայ իր ներքին խռովութիւններով զբաղելու եւ անգամ մըն ալ չյանդգնի»[37]: Միլլին մի կողմից՝ անհնարին էր դարձնում հարիւրհազարաւոր արեւմտահայերի ներգաղթը հունի մէջ դնելու Հայաստանի Առաջին Հանրապետութեան կառավարութեան ջանքերը, միւս կողմից՝ խափանում էր Մուդրոսի զինադադարից յետոյ իրենց հայրենի բնակավայրեր վերադարձած հայութեան բնականոն կեանքը՝ չուտով անգամ օրէնքների միջոցով նրանց հեռացնելով սեփական հայրենիքից[38]: «Հայ տարրին ստեղծագործական կարողութիւնը մոլեգին ատելութիւն մը

33 Նոյն տեղում:

34 Նոյն տեղում, 1919, թիւ 287 («Ի՞նչ ազդեցութիւն գործեց Միլլին Հայաստանի եւ Ցունաստանի վրայ»):

35 Նոյն տեղում:

36 Նոյն տեղում:

37 Նոյն տեղում:

38 Նոյն տեղում:

© National Library of Armenia

*կ'արթնցնէ Միլլիին քինախնդիր ուղեղներուն մէջ: Անոնք իրենց աչքովն իսկ տեսան, թէ ինչպէս հատ ու կտոր հայ բեկորները քանի մը ամիսներու ընթացքին յաջողեցան նորէն արծարծել մարած ու քանդուած օճախներու մէջ ստեղծագործութեան ու վերաշինման կայծերը: Հապա ի՞նչ պիտի ըլլար, եթէ Կովկաս ապաստանած փախստականութիւնն ալ վերադառնար ու հաստատուէր իր բոյնին մէջ Վան, Կարին, թէ այլուր»[39],- գրում էր Արտաշէս Վանարեանը:*

*«Ճակատամարտ»-ում տպագրուած թղթակցութիւններում, լուրերում եւ յայտարարութիւններում պարզորոշ երեւում էին հայկական եւ թուրքական տեղեկատուական աղբիւրների ու հաղորդած տեղեկատուութեան կամ վերլուծութիւնների հակասութիւններն ու իրարամերժութիւնը: Հայկական հարցի վերաբերեալ լրիւ հակասող են երկեւ կողմի տեսակէտներն ու ասածները: Օրինակ, ի տարբերութիւն Արտաշէս Վանարեանի՝ վերը ներկայացուած վերլուծական տեսակէտների, Մուստաֆա Քեմալն իր յայտարարութիւններում եւ ելոյթներում առաջ էր տանում թուրքական այն տեսակէտը, թէ հայերն ապստամբել էին Առաջին աշխարհամարտի տարիներին, դաւաճանել էին պետութեանը՝ անցնելով հակառակորդ Ռուսաստանի կողմը, ուստի տեղահանուել էին իրենց բնակավայրերից, որ նաեւ ռազմական գործողութիւնների թատերաբեմից հեռու մնային: Օրաթերթում բազմաթիւ են Աթաթուրքի կողմից ասուած նման յայտարարութիւնները: Դրանցից մեկում նա, կեղծելով իրականութիւնը, նշում էր, թէ երբ Հայաստանի Առաջին հանրապետութիւնում բնակուող թուրքերին եւ իսլամադաւաններին հալածում էին, իսկ Թուրքիայում իրենք ամեն կարգի օգնութիւն էին ցոյց տալիս հայերին. «Այնպէս որ այն գորովալից ընթացքին առջեւ խելահաս հայերը կը զղջան, որ տեղահանութեան պատճառ եղող ապստամբութիւնը առաջ բերած են»[40]:*

*Քեմալականները Սեբաստիայի համաժողովում ներկայացրած շարժման նախնական ծրագրում նշել էին, որ պայքարելու էին իրենց «հայրենիքի» պատիւը պաշտպանելու համար յոյների եւ հայերի սկսած անջատողական ձեռնարկներից[41]: Մուստաֆա Քեմալն իր ճառի մէջ մասնաւորապէս Հայկական հարցի դէմ պայքարն էր կարեւորում. «Արեւելքի մէջ հայերը սկսան պատրաստուիլ մինչեւ Ալիս տարածուելու եւ իրենց ջարդի քաղաքականութեան, որ այժմէն մինչեւ մեր սահմանները եկած հասած են...Արեւելքի մէջ սահմանի մեր սգաւոր նահանգները, որոնք պատերազմին ամեն տեսակ չարիքներն ու վիշտերը կրած եւ մանաւանդ հայոց վայրագութեանց եւ զուլումներուն ասպարէզ եղած են, ազգային պատիւը փրկելու համար իրաւանց պաշտպան միութիւններ կազմեցին: Նոյնը ըրաւ Տիարպէքիր, որ արեւելքէն ու հարաւէն վտանգ զգացած էր»[42]:*

*«Ճակատամարտ» օրաթերթի՝ 1920 թուականի հրապարակումների մէջ աւելի շատ էին Միլլի շարժման եւ թուրքական կառավարող շրջանակների, հակամիլլի ուժերի յարաբերութիւններին, Փարիզի համաժողովում Թուրքիայի բռնելիք դիրքին, Թուրքիայի Ազգային ուխտին, Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճռին վերաբերող վերլուծութիւնները, թարգմանական յօդուածներն ու լուրերը: Բերենք օրինակ: Երբ համաձայնական ուժերը մի պահ ցանկանում էին Կ.Պոլիսը վերցնել թուրքական վերահսկողութեան տակից, Մուստաֆա Քեմալն իր զօրքերը Սվազից տեղափոխում*

39 Նոյն տեղում:

40 Նոյն տեղում; 1919, թիւ 323 («Մուստաֆա Քեմալի յայտարարութիւնը. հայերու ապստամբութեան հին յանկերգը»):

41 Նոյն տեղում, 1919, թիւ 277 («Մուստաֆա Քեմալի ճառը հայերու մասին»):

42 Նոյն տեղում:



*է Էնկիւրի, որտեղից երկաթգծով հեշտանում էր նրա անմիջական կապը մայրաքաղաքի հետ: «Դաշնակիցներու՝ թուրքերը Պոլսէն հեռացնելու ենթադրեալ որոշումը պատճառ եղած է, որ միլլիճիները կասկածոտ ըլլան հանդէպ դաշնակիցներու եւ կառավարութեան: Մուսթաֆա Քեմալ, Էնկիւրիի երեւելիներու առջեւ բուռն ճառախօսութիւն մը ընելով, վերստին յիշած է Ուիլսընի 14 կէտերը եւ բողոքած է՝ ըսելով, որ իրենց շարժումը երբեք չպիտի ընդունի Թուրքիոյ բաժանումը եւ ստրկացումը: Քեմալ փաշա դեռ կը շարունակէ պաշտպանել Թուրքիան դաշնակիցներու այն ամբաստանութիւններուն դէմ, թէ թուրք կառավարութիւնը ոչ մահմետական փոքրամասնութիւններու դէմ բռնակալօրէն վարուած է եւ թէ ան չունի կառավարելու յատկութիւնը»[43],- կարդում ենք օրաթերթում «Մորնինգ փոստ» պարբերականի՝ յունուարի 12-ի համարից թարգմանաբար արտատպուած վերլուծական յօդուածում: Թղթակիցը նաեւ գրում էր, որ այս ապստամբական քայլով Քեմալը հասկացնում էր, թէ Միլլին կառավարութեանը կ'աջակցէր կամ կը միանար միայն այն դէպքում, երբ հաշտութեան պայմանները կը գոհացնէին իրենց, հակառակ դէպքում՝ քեմալականները կը պատերազմէին[44]: Մեկ այլ օրինակ նշենք: Իր պահանջներն առաջ տանելու նպատակով՝ Քեմալն Էնկիւրիում ստեղծում է սեփական կառավարութիւնը՝ հրահանգելով իրեն հաւատարիմ բոլոր ուժերին եւ անձանց յարաբերութիւնները խզել Կ.Պոլսում տեղակայուած երկրի իրական իշխանութիւնների հետ[45]: Այս ամենը, «Ճակատամարտի» համոզմամբ, լուրջ սպառնալիքներ էր պարունակում հայերի եւ միւս քրիստոնեաների կեանքի համար. «Հայ եւ յոյն բնակչութիւններուն կեանքը խաղալիք դարձած է»[46]: «Ընթացիկ կեանք» բաժնի լուրերից մեկում ընթերցողները շուտով տեղեկանում էին, որ Միլլի շարժումն, արագ քայլերով առաջ գնալով, պարտադրում էր իր կամքը Թուրքիայի կառավարող շրջանակներին՝ փոփոխութիւններ կատարելով նախարարների պալատում: «Միլլին յաղթանակեց եւ յաջողեցաւ դահլիճէն դուրս նետել տալ իր չուզած նախարարները...Միլլի խմբակը կը պահանջէր ներքին, արտաքին գործերու եւ դատական նախարարներու հրաժարումը»[47],- գրում էր պարբերականն՝ աւելացնելով, թէ միլլիական «Հայրենիքի փրկութեան» խմբակը վարչապետին ներկայացրած վերջնագրով հասկացրել էր, որ իրենց պահանջը մերժելու պարագայում՝ Միլլին «դահլիճին վստահութեան քուէ»[48] չէր տալու: Թերթի հրապարակումները վկայում էին, որ միլլիականների բոլոր պահանջները բաւարարուել էին, իսկ նորընտիր պատգամաւոր[49] Մուստաֆա Քեմալին էլ ծափերով էին դիմաւորել Թուրքիայի երեսփոխանական ժողովում[50]: Այդտեղ քեմալական պարագլուխներից պատգամաւոր ընտրուած Րէուֆ բէյն իր ողջոյնի խօսքում ասում էր, որ իրենց շարժումն «ոչ մեկ արտաքին ուժի դրդումով չէ եղած, այլ ան Անատոլուի ժողովուրդին ինքնապաշտպանութեան ձայնն է»[51] եղել: Շերիֆ բէյն էլ վերահաստատում էր համաթրքութեան իրենց ծրագիրը, որը ներառում էր Օսմանեան կայսրութեան նախկին տարածքները, որոնցից*

43 Նոյն տեղում, 1920, թիւ 367 («Մուստաֆա Քեմալ կը շարունակէ իր սպառնալիքները»):

44 Նոյն տեղում:

45 Նոյն տեղում, 1920, թիւ 451 («Մուստաֆա Քեմալի դաժնիճը»):

46 Նոյն տեղում:

47 Նոյն տեղում, 1920, թիւ 376 («Միլլին կը կը յաղթանակէ»):

48 Նոյն տեղում:

49 Նոյն տեղում:

50 Նոյն տեղում («Մուստաֆա Քեմալ ծափերով երեսփոխան կը հռչակուի»):

51 Նոյն տեղում:

© National Library of Armenia

ոչինչ չէին պատրաստւում զիջել որեւէ միջազգային ճնշման ներքոյ կամ որեւէ միջազգային համաձայնագրով ու փաստաթղթով[52]: Վկայակոչենք նրա ելոյթից այս հատուածը. «Իզմիրը թուրք է եւ թուրք պիտի մնայ...Պատերազմը կը շարունակուի, հոն մեր երկիրը ժառանգի նման չկրնար բաժնուիլ: Անատօլու մեկ է եւ մեկ պիտի մնայ»[53]: Այսինքն՝ իրենք հայերին չէին պատրաստւում տալ Արեւմտեան Հայաստանը կամ իրենց բնորոշած՝ Արեւելեան Անատոլիան: «Ճակատամարտ» օրաթերթը նաեւ յստակ մատնանշում էր, որ այս մօտեցումներն ամրագրուած էին քեմալականների մշակած ու խորհրդարանի կողմից հաստատուած Թուրքիայի «Ազգային ուխտ» փաստաթղթի մէջ: Խմբագրակազմն արտառոց էր համարում այդտեղ ներկայացուած պահանջները[54]: Այնինչ Մուստաֆա Քեմալը վաղուց, դեռեւս 1907 թուականին էր մշակել այդ համաթուրանական պետութեան քարտէզը, ինչը վկայել էր նրա մտերիմ ընկերներից Ջեբեսոյը կամ Ալի Ֆուադը[55]: Ինչպէս տեղեկանում ենք ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմութիւն» բազմահատորեակից, Սեւրի պայմանագրի մշակման եւ բանակցային փուլում Մուստաֆա Քեմալը հանդիպումների ընթացքում «պնդում էր, որ Թուրքիայի սահմաններում գոյութիւն չեն ունեցել ո՛չ Արեւմտեան Հայաստան, ո՛չ էլ Հայկական հարց»[56]:

Եթէ Փարիզի համաժողովի գործունէութեան առաջին փուլում եւ Միլլի շարժման ձեւաւորման սկզբնական շրջանում Մուստաֆա Քեմալը հանդէս չէր գալիս թուրքական պետութեան ծաւալապաշտական յայտարարութիւններով, բաւարարւում էր Առաջին աշխարհամարտից յետոյ գրանցուած սահմանային իրողութիւններով, ինչի մասին կարդում ենք օրաթերթի էջերում, որ 1919 թուականի յուլիսի 23-ից օգոստոսի 6-ին «արեւելեան նահանգներու համաժողովը գումարուեցաւ Էրզրումի մէջ, եւ երդում ըրաւ զինադադարի կնքման պահուն գոյութիւն ունեցող սահմանին մէջ հաշտութիւն մը կնքելու համար»[57], ապա իշխանութեան գալու նախաշեմին նա գործում էր յանուն համաթուրքական հզօր պետութիւն կերտելու մաքսիմում ծրագրի իրականացման[58]: «Ճակատամարտի» էջերում Քեմալի այդ նպատակներին էր անդրադարձել Տիգրան Զաւէնը: Իր վերլուծական յօդուածում նա փաստում էր, որ Միլլի շարժումը «թրքական աշխարհին եւ թրքական ազգայնութեան զարթումին»[59] արտայայտութիւնն էր: Ահա թէ յօդուածագիրն ինչպէս էր հասկացել այդ շարժման առաջնահերթութիւնները. «Մուսթաֆա Քեմալները կը ջանան փլչող Օսմանեան կայսրութեան բեկորներուն վրայ բարձրացնել թրքական կայսրութիւն մը...Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին ուրիշ նպատակ չունէր, եթէ ո՛չ ազատագրել Կովկասի թրքութիւնը եւ միացնել զայն իրեն: Թուրք ժողովուրդը կը ձգտի իր միութեան... Թուրք վարիչները մինչեւ հիմա ազգային, տեղական պայքարին տուին անլուր բարբարոսութեան մը ձեւերը: Կուի այս վայրագութեննէն իսկ պէտք է հետեւցնել, թէ որքան ուժգնօրէն կը ձգտին անոնք իրենց համաթրքական ու համիսլամական իտէալի



իրագործման: Որովհետեւ հայ ժողովուրդի ազգային միութեան գործը կը խանգարէ Թուրք վարիչներու երազը, անոնք վճռեցին բնաջնջել հայութիւնը: Ու կը շարունակեն երթալ նոյն ճամփով: Հակառակ պարագային, ի՞նչպէս բացատրել Միլլի շարժման ղեկավարներու անհաշտ վերաբերմունքը դէպի մեր ինքնորոշման իրաւունքը: Ի՞նչպէս բացատրել այն ճիգերը, զոր գործ կը դնէ Ատրբէջանը, տիրանալու հրով ու սրով, հայկական այն հողամասերուն, որոնք կամուրջ կը կազմեն իր եւ Թուրքիոյ միջեւ»[60]: Տիգրան Զաւէնի այս խօսքերն առաւել քան արդիական են: Այսօր Թուրքիայի Հանրապետութիւնը շարունակում է նախորդ վարչակարգերի համաթուրքական ծրագրի իրագործման քաղաքականութիւնը՝ ձգտելով Հայկական հարցը ու հայոց պահանջատիրութեան խնդիրը մէջտեղից հանել: Թէեւ այդ երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ամեն կերպ փորձում է ստուերել Աթաթուրքի ձեռքբերումներն իբրեւ այդ ծրագրի նախակարապետի, սակայն յենւում է նրա մշակած սկզբունքների վրայ:

Թուրքիայի ներքին ու արտաքին կեանքում Մուստաֆա Քեմալի եւ նրա ստեղծած Միլլի շարժման խաղացած դերն անուրանալի եւ բացառիկ է: «Ճակատամարտ» օրաթերթի աշխատակիցներից Արտաշէս Վանարեանը դեռեւս 1919 թուականին գրում էր, որ այդ կազմակերպուած ուժն անգամ յարգանք էր ներշնչել իր նկատմամբ արտաքին աշխարհի հզօր տէրութիւններին[61]: Հայերը, սակայն, քեմալականների գործողութիւնների հետեւանքով ենթարկուեցին կոտորածների ու հիմնականում վտարուեցին բնօրրան հայրենիքից կամ մնացին այնտեղ՝ ստիպուած դառնալով մահմեդական քուրդ կամ թուրք: Մուստաֆա Քեմալն ի սկզբանէ պատերազմ էր յայտարարել հայութեանը եւ Հայաստանին, քանի որ հայ ժողովուրդն ու պետականութիւն ունենալու նրա ցանկութիւնը վտանգում էին Թուրքիայ պետութեան տարածքային ամբողջականութեանը: Չէ որ Առաջին աշխարհամարտից յետոյ այդ պետութեան սահմանները հիմնականում ընդգրկում էին դարեր առաջ հայերից խլած հողատարածքները, որոնք վերջնականապէս հայաթափուեցին հէնց Աթաթուրք անուանուած Մուստաֆա Քեմալի վարած քաղաքականութեան հետեւանքով: Նա իրօք թուրքերի հայրն էր, որն իր զաւակների համար ստեղծեց բնակավայրեր հայերի հողերի վրայ, հայրենիք՝ հայերից բռնազաւթած հայրենիքի հաշուին եւ բարեկեցիկ կեանք արեւմտահայերից խլուած ու իւրացուած հարստութեան եւ ունեցուածքի հիման վրայ: Ժողովրդավարական արժէքների տեսանկիւնից, սակայն, Աթաթուրքը յանցագործ հայր էր, որի յանցանքների թուարկումն ի չիք է դարձնում թուրքերի համար նրա ստեղծած բարիքներն ու կեղծ արժէքները: Նա անգամ իր՝ իշխանութեան գալուց առաջ էր խեղաթիւրել թուրքերի պատմութիւնը՝ 1919 թուականի սեպտեմբերի 4-11-ին Սեբաստիայում տեղի ունեցած համաժողովում հայերին համարելով թուրքերին ջարդող ու երկրի դաւաճան, մոռանալով, որ Թուրքիան հայերի հայրենիքը չէր, որ թուրքերը հարիւրաւոր տարիներ առաջ գրաւել էին հայոց հայրենի երկիրը եւ հայերին դարձրել էին իրենց ենթակայ: Հայերը դա երբեք չեն մոռանայ՝ հոգու խորքում վառ պահելով նաեւ ցեղասպանութեան վնասների փոխհատուցման պահանջ-պայքարի անմար կրակը: Հայկական հարցի լուծման բանալին դեռեւս 1920 թուականին տուել էր հասարակական գործիչ, լրագրող Տիգրան Զաւէնը «Ճակատամարտի» էջերում: Նրա համոզմամբ՝ հայութեան ազատագրական պայքարին խանգարել էր ոչ իրատեսական

52 Նոյն տեղում:

53 Նոյն տեղում:

54 Նոյն տեղում, 1920, թիւ 381 (««Ազգային ուխ- տին ծրագիրը ինչեր կ'երազէ»):

55 *Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն*, էջ 28:

56 *Հայոց պատմութիւն*, հտ. 4-րդ, գ. 1-ին, Եր., «Զանգակ 97», 2010, էջ 152:

57 «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիւ 275 («Միլլի շարժումին նպատակը եւ Հայաստանը»): Տե՛ս նաեւ 1919, թիւ 287 («Ի՞նչ ազդեցութիւն գործեց Միլլին Հայաստանի եւ Յունաստանի վրայ»):

58 *Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն*, էջ 24, 28:

59 Նոյն տեղում, 1920, թիւ 380 («Պատմութիւնը չպիտի ներէ»):

60 Նոյն տեղում:

61 Նոյն տեղում, 1919, թիւ 287 («Ի՞նչ ազդեցութիւն գործեց Միլլին Հայաստանի եւ Յունաստանի վրայ»):

© National Library of Armenia

վերլուծութիւններ ու դրանցից բխող հետեւութիւններ անելը. «Մեր դժբախտութեան աղբիւրը պէտք է փնտռել կարգ մը պատրանքներու մէջ: Շատեր այն համոզումն ունէին, թէ մենք մեր ազատագրութիւնը պիտի ստանայինք «ազատատենչ» պետութիւններէն, իբրեւ վարձատրութիւն մեր ըրած հսկայական զոհողութիւններուն, իբրեւ արդար հատուցում մը մեր դարաւոր մարտիրոսագրութեան: Անոնք կ'անգիտանային, որ պետութիւնները կ'երկրպագեն մեկ կուռքի մը՝ Շահին»[62]: Հայ քաղաքական գործիչների մեծամասնութիւնն, ըստ յօդուածագրի, իր պատրանքներով եւ վարած վերացական քաղաքականութեան մղումով սպասում էր, որ Անտանտի պետութիւնները հայութեանը նուիրելու էին Միացեալ, Անկախ Հայաստան[63]: Նրանք Հայկական հարցը բաժանել էին երկու մասի՝ արեւելահայ եւ արեւմտահայ դատի, այնինչ դա աւելորդ էր, եթէ մեկ պետութիւն ստեղծելու հարցն էր քննարկւում միջազգային ատեաններում այն պարագայում, երբ հայ պետական ու հասարակական այրերից շատերը կատարուած իրողութիւններից աւելի մեծ արժէք էին տալիս դիւանագիտական խաղերին[64]: Տիգրան Զաւէնի եւ «Ճակատամարտ» օրաթերթի մօտեցումն այն էր, որ հայ քաղաքական կեանքում որոշումներ կայացնողները պէտք է իրատես լինեն, առկայ աշխարհա-քաղաքական ու տարածաշրջանային հանգամանքները չվերլուծեն՝ ռոմանտիզմի դիրքերից ելնելով, այլ համադրեն տուեալ ժամանակահատուածում դիւանագիտական դաշտում առկայ օբյեկտիւ իրողութիւններն ու բոլոր ներգրաւեալ կողմերի շահերը՝ առաջ տանելով Հայկական հարցը եւ կարեւորելով համահայկական շահերի միասնութիւնն ու համագործակցութիւնը: Ահա թէ ինչ էր գրում այս կապակցութեամբ «Ճակատամարտը». «Մեր ժողովուրդը կը հառաչէ այն սրբազան միութեան ետեւէն, զոր կը ծնի ամեն ժողովուրդ, երբ կը տեսնէ իր գոյութիւնն ու ազատութիւնը իրական վտանգի տակ: Մեր պատմութիւնը չպիտի ներէ մեր այն բոլոր առաջարկներուն, որոնք չեն դիւրացներ, չեն փութացներ արդէն ուշացած համագործակցութիւնը»[65]: Կարծես մեր օրերի համար են ասուած այս խօսքերը: Չէ որ առ այսօր հայութիւնն անցեալի սխալների վրայ չի կարողանում համապատասխան հետեւութիւններ անել ներկայի ու ապագայի համար՝ անհատական կամ խմբային շահը գերադասելով պետականամէտ մտածողութիւնից եւ պետական շահից:

Կ.Պոլսում հրատարակուած «Ժամանակ» օրաթերթը նոյնպէս ամեն օր անդրադառնում էր Միլլի շարժմանը եւ դրա ղեկավար Մուստաֆա Քեմալի գործունէութեանը՝ այն կապելով Հայկական հարցի եւ հայութեան ապագայի հետ: Մինչեւ 1919 թուականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները հիմնականում լրահոսի կամ ստացած թուրքական պաշտօնական տեղեկատուութեան շրջանակներում էր դա ներկայացնում, իսկ սակաւաթիւ խմբագրականներում կամ վերլուծական յօդուածներում էլ իր հաւատն էր արտայայտում համաձայնական ուժերի խոստումների նկատմամբ Հայկական հարցի առումով եւ յոյսն աւելի շատ դնում էր Միացեալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի ու նրա կողմնակիցների տուած խոստումների վրայ: Թերթը քեմալականներին սկզբնապէս լուրջ գործօն չէր համարում Թուրքիայի կեանքում եւ միայն իշխանական կառոյցների հետ էր կապում առաջիկայ բանակցութիւնները Սեւրի պայմանագրով եւ վիլսոնեան սահմաններով ապագայ Հայաստանի վերաբերեալ: Յիշատակենք բնորոշ վերլուծականներից մեկից իբրեւ օրինակ վերցուած այս պարբերութիւնն՝

62 Նոյն տեղում, 1920, թիւ 380 («Պատմութիւնը չպիտի ների»):

63 Նոյն տեղում:

64 Նոյն տեղում:

65 Նոյն տեղում:



ասուածը հիմնաւորելու համար: «Քաղաքական կացութիւնը եւ Հայաստանի խնդիրը» յօդուածում Արտաշէս Գալփակճեանը 1919 թուականի սեպտեմբերի 26-ին հետեւեալ կերպ էր ամփոփում իր վերլուծութիւնը. «Ի՛նչ որ ալ պատահի, քաղաքականութիւնը ո՛ր կողմ ալ դառնայ, Հայաստան իր պատմական հողերուն վրայ պիտի կազմուի, քանի որ Ամերիկայի համակրութիւնը կը վայելենք: Ուրեմն անհոգ ու անտարբեր կրնանք դիտել մեր շուրջը ծայր տուող ազգային կամ հակազգային շարժումները, ունենալով նաեւ այն զգուշութիւնն ու խոհականութիւնը, որոնք կը պահանջուին ամեն հայու գտնուած տեղւոյն մասնաւոր պայմաններէն»[66]: «Ժամանակը», սակայն, աստիճանաբար սկսում էր գիտակցել քեմալականներից սպասուող վտանգը հայութեան ճակատագրի համար եւ անգամ սեպտեմբերի վերջից նոր բաժին է բացում՝ «Ազգային շարժումը» խորագրով: Այստեղ հիմնականում զետեղում էր թուրքական թերթերից թարգմանաբար ներկայացուող լուրեր Միլլի շարժման ծրագրերի ու ձեռնարկների մասին: Այդ խորագրի ներքոյ օրաթերթում սկզբնական շրջանում տպագրում էին նաեւ կառավարական շրջանակների մերժողական տեսակէտները քեմալականների գործունէութեան մասին, բայց տարեվերջին այլեւս որեւէ բացասական գնահատական չենք գտնի՝ Թուրքերի կողմից արտայայտուած, քանի որ Մուստաֆա Քեմալն արդէն գրեթէ զաւթել էր երկրի իշխանութիւնը, եւ փաստացի նրա կամքով էին կատարւում կառավարութեան պաշտօնեաների վերադասաւորումները: Այս ամենը փոխում է «Ժամանակի» հայեացքը հայրենի երկրում տեղի ունեցող քաղաքական անցուդարձի վերաբերեալ: 1919 թուականի յուլիսի 20-ին, օրինակ, թերթն, իր իսկ բնորոշմամբ, շահեկան տեղեկութիւններ էր հաղորդում Մուստաֆա Քեմալ փաշայի արարքների մասին՝ մանրամասներ հաղորդելով, թէ ինչպէս եւ ինչու էր նա կառավարութեան կողմից համարուել ապստամբ եւ հակասահմանադրական տարր՝ զրկուելով զինուորական պաշտօնից եւ արժանանալով ձերբակալման հրամանի[67]: Օսմանեան խորհրդարանի ընտրութիւնների նախաշեմին արդէն «Ժամանակը» տպագրում էր թուրքական կառավարութեան այն յայտարարութիւնը, որով հաւանութիւն էր տրւում քեմալական շարժման իրականացրած ձեռնարկներին: Այդ փաստաթղթում նշւում էր, թէ Միլլի շարժման նպատակն էր «օսմ. շահերու եւ սահմաններու պահպանութիւնը, եւ կառավարութիւնը մասնակից է այդ զգացումներուն»[68]: Յօդուածագիրը փաստում էր, որ կառավարութիւնը յայտարարութեան մէջ կրկնում էր այն խօսքերը, որոնք «գաւառի շարժման պարագլուխները կը յեղյեղէին երկու ամիսներէ ի վեր՝ իրաւունք, հաւասարութիւն, արդարութիւն»[69], իսկ, միւս կողմից, տեւական ժամանակ արեւմտահայ գաւառից մայրաքաղաք եկողները նկարագրում էին այդ շարժման ներկայացուցիչների կողմից ռազմամթերքի փոխադրութեան, գաղտնի ժողովների ու հայերի հասցէին ուղղուած սպառնալիքներով լեցուն պատմութիւններ[70]: «Յետին թուրք գիւղացին գիտէր ու կ'ըսէր. «Քանի մը շաբաթ ալ համբերեցէք ու կը տեսնէք»...Թուրքիոյ սահմաններէն անդին եւ ասդին տեղի ունեցած դէպքերու ոգին եւ շարժառիթը նոյնն է: Այսօրուան մտայնութիւնն ալ 1915-ի մտայնութենէն չտարբերիր, միայն պատերազմին արդիւնքը եւ Եւրոպայի ու Ամերիկայի ոյժը եւ հոն տիրող ընդհանուր ոգին են, որ մասամբ կը սանձեն այն մարդերը, որոնք բեմ կ'ելլեն դարձեալ՝ յոյս դնելով անմտաբար

66 «Ժամանակ», Կ.Պոլիս, 1919, թիւ 3644 («Քաղ. կացութիւնը եւ Հայաստանի խնդիրը»):

67 Նոյն տեղում, 1919, թիւ 3588 («Ի՞նչ ըրաւ Մուստաֆա Քեմալ փաշա»):

68 Նոյն տեղում, 1919, թիւ 3643 («Կառավարութեան յայտարարութիւնը»):

69 Նոյն տեղում:

70 Նոյն տեղում:

© National Library of Armenia

հուրի եւ սուրի քաղաքականութեան վրայ»[71],- գրում էր Ա. Մ.-ն: Յօդուածագիրն ու թերթի խմբագրակազմը փաստօրէն չէին պատկերացնում, որ երկրում թափ առած նոր շարժման ղեկավարները կրկին դիմելու էին երիտթուրքերի մեթոդին, այն է՝ Հայկական հարցը լուծել հայերին իսպառ ոչնչացնելով հէնց եւրոպական ու ամերիկեան հասարակութիւնների ու նրանց քաղաքական ղեկավարների լուռ համաձայնութեամբ կամ հանդիսատես լինելու պայմաններում: Եւ դա այն դէպքում, երբ «Ժամանակը» թուրքական թերթերից թարգմանաբար տպագրում էր Կարին-Էրզրումում եւ Սեբաստիա-Սվազում քեմալականների անցկացրած համաժողովներում նրանց առաջնորդի ելոյթներն՝ ուղղուած հայութեան ֆիզիկական գոյութեան ու կեանքի ապահովութեան իրաւունքների դէմ: Իր էջերում դրանք զետեղում էր՝ առանց մեկնաբանութեան եւ նոյնիսկ չնչելով, որ Մուստաֆա Քեմալը հանդէս էր գալիս հայութեանը վարկաբեկող սուտ, մերկապարանոց յայտարարութիւններով: Օրինակ՝ պարբերականը լուրերից մեկում միայն ներկայացնում էր Սվազի համաժողովում Քեմալի խօսքերն այն մասին, թէ իբրեւ հայերը գրաւել էին արեւելեան հատուածներում թուրքերի հողերը՝ սկսելով ջարդի քաղաքականութիւն. «Արեւելքի մէջ մեր նահանգները հայոց վայրագութիւններուն եւ զուլումներուն ասպարէզ եղած են, ուստի իրաւունքներու պաշտպան միութիւններ կազմուեցան՝ ազգային պատիւը փրկելու համար»[72]: Նմանատիպ մեկ ուրիշ լուրի մէջ կրկին Սեբաստիայի համաժողովին անդրադարձ կար, որում թուրքական պարբերականը տպագրել էր հատուած Քեմալի ելոյթից[73]: Նա մասնակիցներին յորդորում էր միանալ իրենց շարժմանը, որպէսզի փրկէին հայրենիքը, որ «մեկ կողմէն՝ օտար գրաւումներու կ'ենթարկուի, միւս կողմէն ալ՝ օտար տարրեր, ինչպէս՝ հայերը, յոյները կը դիմեն չափազանցութեան, եւ մինչեւ իսկ, կ'ըսէ, թէ հայերը իրենց ջարդի քաղաքականութիւնը կը շարունակեն օսմանեան սահմաններուն մօտ»[74]: «Ժամանակը», կրկին առանց որեւէ մեկնաբանութեան կամ վերլուծութեան, տպագրել էր նաեւ Սեբաստիայի համաժողովում քեմալիստների ընդունած որոշումները: Դրանցում նրանք մատնանշում էին.

• Մուդրոսի զինադադարի ստորագրման օրուայ դրութեամբ թուրքական սահմանների մէջ մնացած բոլոր «օսմ. հողերը, ուր իսլամները մեծամասնութիւն կը կազմեն, ո՛չ մեկ պատճառով»[75] չանջատել իրենց հայրենիքից,

• Թուրքիայի ամբողջականութիւնը եւ անկախութիւնը կը պահպանուէին, եթէ տիրապետող դառնային «ազգ. ոյժը եւ վարչութիւնը»[76],

• Այտնի, Մանիսայի եւ Պալըքեսիի ճակատներում համախմբուած թուրք ազգային ուժերը պէտք է ընդդիմանան օսմանեան որեւէ երկրի գրաւման եւ մանաւանդ անկախ Յունաստանի կամ Հայաստանի «կազմութեան նպատակ ունեցող արարքներուն»[77],

• բոլոր ոչ իսլամ ժողովուրդները, որոնց հետ միեւնոյն հայրենիքում ի սկզբանէ ապրել էին թուրքերը, պէտք է պահէին իրենց իրաւունքները, բայց՝ մի պայմանով, այն է՝ «յիշեալ տարրերուն պիտի չտրուին այնպիսի առանձնաշնորհումներ»[78], որոնք կը խանգարէին թուրքերի քաղաքական տիրապետութեանն ու ընկերային հաւասարակշռութեանը,

71 Նոյն տեղում:

72 Նոյն տեղում («Մուստաֆա Քեմալ փաշա եւ հայերը»):

73 Նոյն տեղում, 1919, թիւ 3640 («Միլլի շարժումը»):

74 Նոյն տեղում:

75 Նոյն տեղում, 1919, թիւ 3641 («Սվազի համաժողովին որոշումները»):

76 Նոյն տեղում:

77 Նոյն տեղում:

78 Նոյն տեղում:



• եթէ օսմանեան կառավարութիւնը հարկադրուած լինէր տալու երկրի մի մասը, ապա իրենք կը ձեռնարկէին միջոցներ՝ խալիֆայութիւնը եւ երկրի ամբողջակա-նութիւնն «անվթար պահելու համար»[79],

• կենտրոնական կառավարութիւնը պարտաւոր էր հպատակուել ազգային կամքին (այսինքն՝ Միլլի շարժման- Մ.Հ.), քանի որ այս որոշումները կայացնելու ժամանակաշրջանում «ամեն ազգ իր ճակատագիրը որոշելու իրաւունքը կը վայելէր»[80]:

«Ժամանակ» օրաթերթի՝ այս ժամանակահատուածում տպագրած նիւթերի մէջ երբեմն հանդիպում էին փոքրիկ վերլուծութիւն կամ մեկնաբանութիւն պարունակող յօդուածներ եւ լուրեր: Դրանցից մեկում անդրադառնում էին Սեբաստիայում քեմալականների հրատարակած «Իտարէի միլլիյէ» թերթի խմբագրականում բերուած այն նախադասութեանը, թէ Միլլի շարժումն ուղղուած չէր արեւմտահայ գաւառի դէմ՝ գրելով, որ նման պնդումը ծիծաղելի անամօթութիւն էր[81]: Չէ որ Մուստաֆա Քեմալը Սեբաստիայի համաժողովի բացման խօսքում, «յիշատակելէ յետոյ թուրքերու կրած ջարդը հայերէ, կ'ըսէ նաեւ, որ հայերն ընդարձակ Հայաստանի ցանկութիւններ կը տածեն, եւ խիստ ոճով կը յարձակի համաձայնական կառավարութեանց դէմ»[82]: Թերթը գրում էր, թէ միայն անմիտները կարող էին հաւատալ, որ Քեմալի շուրջ հաւաքուած խումբն որեւէ կապ չունէր իթթիհատի հետ կամ էլ հայութեան նկատմամբ այդ կուսակցութեան որդեգրած քաղաքականութեան շարունակողը չէր[83]: խմբագրութիւնը տպագրում էր այս տեսակէտին համահունչ թարգմանական բազմաթիւ նիւթեր: Օրինակ՝ 1919 թուականի հոկտեմբերի 30-ին «Թան» թերթում տպագրուած թղթակցութիւնից մէջբերուած հատուածում գրուած էր, որ Միլլի շարժումն իր էութեամբ բացարձակապէս իթթիհատական էր, իսկ դրա ղեկավարներն աչքի էին ընկնում անլուր յանդգնութեամբ[84] : Զինադադարից յետոյ «Թրքահայաստանի գաւառները վերադառնալ փութացած»[85] հայերն ապրում էին սարսափի մէջ՝ քեմալականների պահուածքի պատճառով: Նրանք ջանում էին հեռանալ ապահով բնակավայրեր, քանի որ յուսահատութեան էին մատնուել Միլլի շարժման իրականացրած սպանութիւններից, կիսասոված կեանքով գիւղերում ապրելու փոխարէն՝ քաղաք գնալ չկարողանալու պատճառով[86]: Հէնց քեմալականների կողմից նաեւ խորհրդարանական ընտրութիւնների կազմակերպման ու անցկացման գործընթացի վրայ վերահսկողութեան հաստատում էր այն հիմնական պատճառը, «Ժամանակի» կարծիքով, որ Պատրիարքարանը եւ արեւմտահայութեան մեծամասնութիւնն որոշում ընդունեցին չմասնակցել կամ ձեռնպահ մնալ դրանց մասնակցելուց: Այս առիթով ահա թէ ինչ էր գրում թերթը. «Միլլի շարժումին հետեւանքով այլեւս քուէարկութեան ազատութիւնը կորսուած է, եւ ընտրութիւնը պիտի կատարուի իթթիհատականներու ճնշումին եւ ազդեցութեան տակ, եւ հաւանական է, որ հայկական գործերով արատաւորուած անձեր պիտի գան՝ աթոռ ունենալով իբրեւ երեսփոխան»[87]:

Անդրադառնալով օսմանեան խորհրդարանի ընտրութիւնների մասնակցութիւնից հրաժարուելու հանգամանքներին՝

79 Նոյն տեղում:

80 Նոյն տեղում:

81 Նոյն տեղում («Գաւառի հայութիւնը եւ Միլլի շարժումը»):

82 Նոյն տեղում:

83 Նոյն տեղում:

84 Նոյն տեղում, 1919, թիւ 3669 («Ազգ. շարժումը եւ հայերը»):

85 Նոյն տեղում:

86 Նոյն տեղում:

87 Նոյն տեղում, 1919, թիւ 3646 («երեսփոխ. ընտրութիւնները եւ հայ ազգը»):

© National Library of Armenia

պարբերականը, բացի Միլլի շարժումն որպէս խանգարիչ գործօն բնութագրելը, առանձնացնում էր մի քանի էական պատճառ: Դրանք էին.

• Հայ ընտրողներից շատերը սպանուել էին, իսկ ողջ մնացած եւ հայրենի բնակավայրեր վերադարձածների մեծամասնութեանը Թուրքական իշխանութիւնները թոյլ չէին տալիս վերատիրանալ իրենց գոյքին ու տներին ու իրենց զգալ իբրեւ երկրի լիարժէք քաղաքացիներ,

• Նախորդ խորհրդարանի պատգամաւորները ոչ միայն կառավարութեանը պատասխանատուութեան չէին կանչել իրենց երեսփոխան ընտրած հայերի սպանութեան համար, այլեւ կարիք չէին տեսել անգամ հարցնելու, թէ ի՞նչ էին եղել արեւմտահայերը, ովքե՞ր ու ինչու՞ էին նրանց կեանքը խլել, ուստի «այս կերպով խորհրդարանն իր սահմանադրական գոյութեան իրաւունքը կորսնցուց հայոց համար»[88],

• Էրզրումի, Բայազետի, Տիգրանակերտի, Խարբերդի պատգամաւորներից շատերը հայերի կոտորածն էին վարել կամ գործակցել ու մնացել էին անպատիժ,

• Հայ պատգամաւորներին հարկադրել էին լռել իրենց ժողովրդի կոտորածի եւ տեղահանութեան մասին՝ այդպիսով «ժխտելով իրենց գոյութեան իրաւունք»[89],

• զինադադարից յետոյ ընտրելու իրաւունք ունեցող հայ կանանց ու աղջիկներին, նաեւ որբերին իսլամադաւանները հիմնականում դեռեւս չէին վերադարձնում հայ համայնքին,

• Թուրքական ռազմական դատարանները «արդարութեան նպատակին իրագործման բոլորովին հակառակ ընթացք մը ունեցան»[90], եւ երաշխաւորութեամբ բանտերից ազատ արձակուեցին կամ իրենց նախկին պաշտօններին կարգուեցին հայոց ջարդերի մէջ մեղադրուող յանցագործները[91]:

Թուրքական «Իֆհամ» եւ «Վագըթ» պարբերականների խմբագիրների հետ հանդիպման ժամանակ Զաւէն արքեպիսկոպոս Տէր-Եղիայեանը, բացի վերոյիշեալ պատճառներից, մատնանշել էր եւս մեկ-երկու հանգամանք, որոնցով պայմանաւորուած՝ արեւմտահայութիւնը ձեռնպահ էր մնալու ընտութիւնների մասնակցութեան հարցում[92]: Պատրիարքը մասնաւորապէս ասել էր. «Նոր կազմուած դահլիճը մինչեւ ցարդ միայն պաշտօնական յայտարարութեամբ զբաղեցաւ, որով չենք գիտեր, թէ ինչ դիրք պիտի բռնէ մեր ազգին հանդէպ, որպէսզի մենք ալ մերինը ճշդենք: Ընտրութեանց խնդրոյն մեր մասնակցութիւնը անկարելի է նիւթապէս, քանի որ ժողովուրդը ցրուած է, եւ մեր ազգը ցարդ նկատուած է օտար տարր մը այս երկրին մէջ: Երկրին միւս տարրերուն հետ հաւասար իրաւունք վայելելու համար պատերազմէն առաջ պահանջք ըրինք: Հիմա երկրին երեսը իբր մարդ ապրիլ կ'ուզենք»[93]:

Պատահական չէր, որ Զաւէն արքեպիսկոպոսը եւ հայ միւս յարանուանութիւնների ղեկավարները համատեղ յայտարարութիւն-դիմում էին ներկայացրել Անտանտի երկրներին, որ նրանք ուշադրութիւն դարձնէին Թուրքիայում խորհրդարանական ընտրութիւնների ընթացքում կատարուող զեղծարարութիւններին, խախտումներին, քեմալականների ճնշմամբ իրականացուող ընտրակեղծարարութեանը եւ հայերին ստիպելով դրանց մասնակից դարձնելու երեւոյթներին: «Ժամանակը» հրապարակումների միջոցով ցոյց էր տալիս Թուրքական իշխանութիւնների, հասարակական կառոյցների եւ մամուլի անհանդուրժողական կեցուածքն այս իրողութիւնների հանդէպ: Թերթում կարդում ենք, որ «հոգեւոր պետերու՝ Համաձայնական տէրութեանց ներկայացուցիչներուն մօտ կատարած դիմումը իթթիհատի թմբուկը զարնող թուրք մամուլին եւ անկէ առաջնորդուող խմբակին գործին չեկաւ»[94]: Թերթը գրում էր, թէ այդ դիմումի պատճառն այն էր, որ նա եւ ցեղասպանութիւնից փրկուած արեւմտահայութիւնը հասկանում էին քեմալականների բուն ցանկութիւնը. «Գաւառի հայութիւնը իրաւունք ունի վախնալու, որովհետեւ գիտէ ու կը տեսնայ, թէ այդ կազմակերպութիւնը մեկ անուանափոխութիւնն է իթթիհատին, որ հայութեան բնաջնջումը պատրաստեց: Եւ այս է պատճառը Զաւէն պատրիարքի դիմումին, որ կատարեց իր ազգին անունով եւ անոր կամքով»[95]: Ըստ յօդուածագրի՝ պատրիարքարանը համոզուած էր, որ այդ նոր իթթիհատական կազմակերպութիւնը կամ Միլլի շարժումն առայժմ չէր կոտորում իրենց բնակավայրեր վերադարձող հայերին, քանի որ սպասում էր Փարիզի համաժողովի որոշմանը Թուրքիայի ապագայ ճակատագրի վերաբերեալ՝ ասելով. «Եթէ Հաշտութեան ժողովը մեր շահերուն հակառակ բան մը պարտադրէ մեզի, կամ ստիպուինք մաս մը հող թողուլ մեր երկրէն, պիտի դիմադրենք»: Միլլիի ձեռնարկը աւելի ապագայի պատրաստութիւն է՝ ուղղուած թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ այս երկրին ոչ իսլամ տարրերուն, մասնաւորապէս հայոց դէմ: Մեկ խօսքով՝ Թուրքիա կ'ըսէ, թէ Հաշտութեան ժողովը չէ, որ պիտի որոշէ իմ ճակատագիրը, այլ ես պիտի որոշեմ զայն»[96]: Արեւմտահայութիւնն էլ, նշում էր յօդուածագիր Ա.Մ.-ն, իր գոյութիւնն ապահովելու խնդիր ունէր, ինչով էլ թելադրուած էր հոգեւոր պետերի գրած դիմում-նամակն Անտանտի ղեկավարներին[97]:

Համաձայնական ուժերի հետ կապելով հայկական հարցի լուծումը՝ «Ժամանակը» պատասխանատուութեան էր կանչում Թուրքիայի կառավարութեանը. «Թուրք կառավարութիւնը որեւէ ատեն պարտական պիտի ըլլայ պատահած այս աննախընթաց եղեռնին համար, ցորչափ չի մաքրեր իր հաշիւը սոսկացող ոճրագործներուն հետ»[98]: Հեղինակը նաեւ գրում էր հայոց պահանջատիրութեան մասին. «Մենք մեր հայրենի երկիրը՝ Հայաստանը, պահանջելու պահուն պիտի պահանջենք, եւ միշտ, պատժուիլը ոճրագործներուն եւ հատուցումը մեր բոլոր վնասներուն...Մեր այդ պահանջքը չի նշանակեր չկամութիւն Թուրք ազգին գոյութեան մասին»[99]: Այդ պահանջների իրագործման մէջ էական դեր էր խաղալու, թերթի կարծիքով, անկախ ու միացեալ Հայաստանի հռչակումը, ինչն ամրագրուել էր Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճռում: Նա միաժամանակ մտավախութիւն էր յայտնում, որ հայ ժողովրդի՝ անկախ հայրենիքում ապրելու իրաւունքը Թուրքական իշխանութիւնները չմերժէին նոր ջարդերով, ինչպէս արել էին դարեր շարունակ, երբ հայը փորձել էր պաշտպանել իր պատուի, կեանքի եւ ունեցուածքի ապահովութիւնը[100]:

«Ժամանակի» միջազգային եւ տարածաշրջանային քաղաքական անցուդարձի կանխատեսումներն աւելի իրատեսական էին դարձել յատկապէս 1920 թուականի վերլուծական յօդուածներում: Թէեւ օրաթերթը հանգամանօրէն կամ թէկուզ թռուցիկ կերպով չէր անդրադարձել Թուրքիայի կեանքում վճռորոշ նշանակութիւն

88 Նոյն տեղում:
89 Նոյն տեղում:
90 Նոյն տեղում:
91 Նոյն տեղում:
92 Նոյն տեղում:
93 Նոյն տեղում:
94 Նոյն տեղում, 1919, թիւ 3655 («Գոյութեան պայքարը»):
95 Նոյն տեղում:
96 Նոյն տեղում:
97 Նոյն տեղում:
98 Նոյն տեղում, 1919, թիւ 3723 («Մենք շատ չենք տեսներ»):
99 Նոյն տեղում:
100 Նոյն տեղում:



© National Library of Armenia

*ունեցող «ազգային ուխտին», սակայն ուշադրութեան կենտրոնում էր պահել արեւմտահայ գաւառում կատարուող դէպքերին ու Հայութեան վերսկսուած կոտորածներին, ինչպէս նաեւ Փարիզի Խաղաղութեան Համաժողովում Հայաստանի Առաջին Հանրապետութեան ու Թուրքիայի շահերի հակասութիւններին, Հայ-Թուրքական ռազմական բախումներին, Հայկական հարցի զարգացումներին: «Ժամանակը» ներկայացնում էր Արեւմտեան Հայաստանի բնակավայրերում քեմալականների կողոպուտները, աւերն ու ջարդը: Գրում էր, որ նրանք չէին թողնում Հայութեանը գաղթել ու փրկուել կոտորածի քաղաքականութիւնից: Տեղերում քեմալական ուժերն սպանում էին Հայերին, իսկ այդ շարժման քաղաքական առաջնորդներն այդ ընթացքում դիւանագիտական մարտեր էին մղում աշխարհի հզօրների հետ՝ կարողանալով նրանց շահագրգռել յանուն թուրքական նպատակների իրագործման:*

*«Ժամանակը», հիմնուելով թուրքական մամուլի տեղեկութիւնների վրայ, ծանուցում էր, որ օսմանեան խորհրդարանում Անատոլիայի արեւելեան նահանգների ներկայացուցիչները ժողով էին արել եւ յայտարարութիւն էին ընդունել՝ «պաշտպանելու» համար իրենց նահանգների ժողովուրդների իրաւունքները[101]: Նրանք յայտարարում էին. «Կարելի չէ, որ արեւելեան նահանգները Հայաստանի վերածուին: Մինչ յայտնի է, թէ հայկական զուլումները մարդկութեան երեսը կը կարմրցնեն եւ աշխարհի մէջ չլսուած ստրիճանի մը հասած են, խաղաղութեան համաժողովը արդեօք արեւելեան նահանգները Հայաստանի վերածելու որոշում տալով կ'ուզէ, որ այդ տեղերը իսլամներու համար մէյ մեկ սպանդանոցնե՞ր ըլլան»[102]: Ինչպէս պարբերականի բազմաթիւ հրապարակումներն էին այս շրջանում վկայում, քեմալականներն իրենց ղեկավարի նման մշտապէս ստում էին, դիմում էին կեղծիքների ու յօրինուած «փաստերի», երբ խօսքը վերաբերում էր Հայկական հարցին կամ կոտորածներին, որոնք իբրեւ թէ Հայերն էին կազմակերպել Թուրքերի հանդէպ: «Ժամանակն» այս առումով գրում էր, որ Մուստաֆա Քեմալը գերազանցել էր Թալէաթին եւ Էնվերին՝ Հայութեան ջարդերն անպատիժ ձեւով իրականացնելով այնպիսի ժամանակահատուածում, երբ միջազգային համաժողովներում որոշւում էր Թուրքիայի ապագան[103]: Յօդուածագիր Ա.Մ.-ն եզրակացնում էր, որ Միլլի շարժման ծրագիրն էր՝ համաձայնութեան գալ Անտանտի երկրների հետ Թուրքերի «ըմբռնած կերպով, Հայերին յուսահատեցնել եւ հեռացնել իրենց նպատակէն»[104]: Նա առաջարկում էր Հայութեանը համախմբուել, գտնել ինքնապաշտպանութեան միջոցներ, ի թիւս որոնց՝ յոյների հետ միաւորուած պայքարը քեմալականների դէմ՝ մինչեւ կը լուծուէր Հայկական հարցը յօգուտ Հայութեան[105]: Մեկ այլ յօդուածում էլ հայ քաղաքական գործիչներին խորհուրդ էր տալիս ուշադիր հետեւել Թուրքիայում եւ տարածաշրջանում կատարուող իրադարձութիւններին, իրավիճակային փոփոխութիւններին եւ յարմար պահի դրանցից օգտուել՝ Հայութեան դրութիւնը բարւոքելու համար[106]: Յօդուածագրի միջոցով այդ առաջնորդող յօդուածում թերթը պահանջում էր յիշել ու չկրկնել ցեղասպանութեան տարիներին դաժանաբար սպանուած հայ նախորդ քաղաքական էլիտայի սխալները[107]: Օրուայ ազգային գործիչներին յիշեցնում էր, որ*

101 Նոյն տեղում, 1920, թիւ 3766 («Թուրք երեսփոխանները Հայաստանի կազմութեան դէմ»):
102 Նոյն տեղում:
103 Նոյն տեղում («Մենք մեզի պաշտպանենք»):
104 Նոյն տեղում:
105 Նոյն տեղում:
106 Նոյն տեղում, 1920, թիւ 3743 («Մեզ շրջապատող վիճակը»):
107 Նոյն տեղում:



*սրի եւ արիւնի վրայ յենուող, կոտորածներ պլանաւորող ազգերի հետ փոխհամաձայնութեան գալու փորձերն ապարդիւն կը լինէին, մանաւանդ Թուրքերի եւ ադրբեջանցիների դէպքում[108]: «Ջինադադարէն յետոյ Հայոց ենթարկուած աղետին վրայ գոնէ երեւութապէս ցաւող Թուրքերն այսօր կը ցաւին, թէ ինչո՛ւ քրիստոնեայ տարրը ամբողջապէս չջնջուեցաւ այս երկրին մէջ: Անոնք կ'ըսեն, թէ Թուրքը միայն Թուրքին բարեկամ կրնայ ըլլալ, իրենք ներքին ոչ իսլամ տարրերու հետ ամեն կապ խզուած կը տեսնեն եւ շատ փոքր կապով մը կապուած կը զգան զիրենք արտաքին աշխարհի հետ, սպասելով, որ Եւրոպա վճռէ Թուրքիոյ ճակատագիրը, եւ այն ալ՝ իրենց ըմբռնած կամ ուզած ձեւով»[109],- կարդում ենք թերթի վերոյիշեալ խմբագրականում:*

*Ամփոփելով Կ.Պոլսի առաջատար կամ առաւել բարձր վարկանիշ ունեցող երկու պարբերականի՝ Միլլի շարժման ու դրա առաջնորդ Մուստաֆա Քեմալի գործունէութեանն առնչուող յօդուածների ուսումնասիրութիւնը՝ կարող ենք փաստել կամ եզրակացնել հետեւեալը.*

- *թէ՛ «Ճակատամարտը», թէ՛ «Ժամանակը» կարեւոր տեղ են յատկացրել այդ թեմաներին՝ գիտակցելով, որ Թուրքիայի եւ Հայկական հարցի ապագան մեծապէս կախուած էր քեմալականների ծրագրերի յաջողութիւնից կամ տապալումից,*
- *«Ճակատամարտը» հիմնականում վերլուծական յօդուածների միջոցով էր արտայայտել իր դիրքորոշումը յիշեալ թեմաների վերաբերեալ, այնինչ «Ժամանակը» խուսափել էր պարզորոշ ներկայացնել սեփական գնահատականները Միլլի շարժման վերաբերեալ եւ միայն 1920 թուականի փետրուար ամսուանից էր տպագրել վերլուծական յօդուածներ այդ հարցերի կապակցութեամբ, երբ արդէն Թուրքիայում քեմալականների յաղթանակը պաշտօնապէս գրանցուել էր օրէնսդիր ու գործադիր իշխանական համակարգերում, եւ հայ հանրութեանը նրանց բուն նպատակների մասին այլեւս կարիք չէր զգացւում զգուշացնել, ուղիներ յուշել առաջիկայ քայլերի առումով,*
- *թէեւ «Ճակատամարտն» սկզբնապէս չէր պատկերացրել քեմալականների գործելակերպի հիմնական առաջնահերթութիւնները, ինչպէս նաեւ այն, որ Միլլի շարժումը կարողանալու էր կարճ ժամանակում զաւթել երկրի իշխանութիւնը, բայց շուտով ըմբռնել էր Թուրքիայի «Ազգային ուխտ»-ի հետապնդած նպատակները՝ հրապարակումներով անդրադառնալով դրանց եւ ընթերցողների ուշադրութիւնը բեւեռելով քեմալականների հեռահար համաթուրքական եւ Հայկական Հարցի դէմ ուղղուած ծրագրերի վրայ, իսկ «Ժամանակ» օրաթերթում չենք գտնի այդ թեմային նուիրուած որեւէ յօդուած, ինչը լուրջ բացթողում էր քաղաքական կոնկրետ ուղղուածութիւն ունեցող պարբերականի համար,*
- *այս ամենով հանդերձ՝ երկու օրաթերթն էլ փորձել են բացայայտել քեմալականների գործողութիւնների շարժառիթներն եւ իրենց խորհուրդներով ու առաջարկներով հայոց պետականութիւնն ու հայ հասարակութեանը հնարաւորինս զերծ պահել Միլլի շարժման գործունէութեան կործանարար հետեւանքներից:*

108 Նոյն տեղում:
109 Նոյն տեղում:

© National Library of Armenia